Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2018 թ.
ապրիլի 13 -ի N 374 - Ա
որոշման

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ
ՆԿԱՐԱԳԻՐԸ

Դասընթացի անվանումը	Պետության պաշտպանության կազմակերպումը խաղաղ և պատերազմական ժամանակ՝ խորհրդարանական կառավարման և միջգերատեսչական համագործակ-ցության պայմաններում
Անցկացման ժամանակը և տևողությունը	2018 թ. մայիսի 7-ից մինչև հունիսի 29-ը 8 շաբաթ, 160 ակադեմիական ժամ (մեկ ակադեմիական ժամը՝ 40 րոպե)
Նպատակային խումբը	«Շանթ-2018» զորավարժությունում ներգրավված պետական մարմինների ներկայացուցիչներ (նախարարի տեղակալ, վարչության պետ և հավասարազոր այլ պաշտոնատար անձինք, որոշ մոդուլներին նաև՝ փոխմարզպետներ)
Դասընթացի նպատակը	Նպաստել պետությունը խաղաղից պատերազմական դրության տեղափոխելու գործընթացում ներգրավվող պետական մարմինների ներկայացուցիչների գիտելիք-ների զարգացմանն ու փոխանակմանը: Դասընթացի իրականացումը հնարավորություն կտա ՀՀ պաշտպանության նախարարության շուրջ համախմբել պաշտպանության ոլորտում ՀՀ միջգերատեսչական ներուժը՝ ստեղծելով գիտելիքի համակարգման և փորձի փոխանակման ակտիվ կրթական միջավայր:
Դասընթացի խնդիրները	1. Ապահովել նպաստավոր կրթական միջավայր՝ միջգերատեսչական ձևաչափով ունկնդիրների միասնական գիտելիքների ձևավորման և փոխանակման համար 2. Հարստացնել և համակարգել ունկնդիրների գիտելիքները՝ ազգային անվտանգության ապահովման, պետության ռազմական անվտանգության համակարգի, պետության պաշտպանության կազմակերպման, միջազգային, տարածաշրջանային անվտանգության դինամիկայի և ռազմավարական լիդերության ոլորտների վերաբերյալ 3. Նպաստել ունկնդիրների ռազմաքաղաքական իրադրու-թյունները վերլուծելու և գնահատելու կարողությունների

	զարգացմանը 4. Կատարելագործել ունկնդիրների՝ ռազմավարական որոշումներ ընդունելու հմտությունները 5. Միասնական գիտելիքի հիման վրա նախապատրաստել մասնակիցներին «Շանթ-2018» զորավարժությանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
ապրիլի 13 -ի N 374 - Ա
որոշման

Ց Ա Ն Կ

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ՆԵՐԳՐԱՎՎՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

ՀՀ արտաքին գործերի նախարարություն
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՀՀ առողջապահության նախարարություն
ՀՀ արդարադատության նախարարություն
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
ՀՀ բնապահպանության նախարարություն
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ՀՀ մշակույթի նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ՀՀ սփյուռքի նախարարություն
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ՀՀ ֆինանսների նախարարություն
ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն
ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)
ՀՀ Արագածոտնի մարզպետարան
ՀՀ Արարատի մարզպետարան
ՀՀ Արմավիրի մարզպետարան
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ՀՀ Լոռու մարզպետարան
ՀՀ Կոտայքի մարզպետարան
ՀՀ Շիրակի մարզպետարան
ՀՀ Սյունիքի մարզպետարան
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ՀՀ Տավուշի մարզպետարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

voroshumkv031-1